BURBANK UNIFIED SCHOOL DISTRICT
Instructional Services
Linda Junge
Assistant Superintendent, Instructional Services
1900 West Olive Avenue
Burbank, California 91506-2460
Telephone (818) 729-4493 Fax (818) 729-4402

Փետրվար 2024

Հարգելի ծնող/պահապան.

Ձեր երեխայի ուսումը չափելու բազմաթիվ եղանակներ կան: Ձեր երեխայի ուսուցիչը օգտվում է գնահատականների թերթիկից, դասարանական աշխատանքից, իր իսկ դիտարկումներից և տարեվերջյան պետական քննությունների արդյունքներից՝ ձեր երեխայի ուսման վերաբերյալ ամբողջական պատկերացում կազմելու համար: Ամեն տարի, աշակերտները հանձնում են Կալիֆոռնիայի աշակերտի կատարողականության և առաջադիմության քննությունները (CAASPP): Կախված ձեր երեխայի տարիքից կամ կրթական ծրագրերից, նա հանձնելու է հետևյալ քննությունները.

- 3-8-րդ և 11-րդ դասարաններում պահանջվում է հանձնել անգլերեն լեզվի և մաթեմատիկայի Խելացի հավասարակշռված ամփոփիչ քննությունները
- 5-րդ, 8-րդ դասարաններում և մեկ անգամ միջնակարգ դպրոցում պահանջվում է հանձնել Կալիֆոռնիայի գիտության քննությունը (CAST)

Այս տարի, Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջանում սովորող աշակերտներն անձամբ կհանձնեն ամփոփիչ այս քննությունները: Անկախ (ինքնուրույն) ուսուցման ծրագրում սովորող աշակերտները հավելյալ տեղեկություն կստանան, թե ինչպես հանձնել քննությունը:

Ձեր դպրոցի քննությունների դասացուցակի վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար, խնդրում ենք դիմել քննության համար պատասխանատու ներքոհիշյալ աշխատակիցներին կամ հյուրընկալել հետևյալ կայքէջը. https://www.burbankusd.org/site/default.aspx?PageID=898

Դպրոցի անուն	**Քննության կազմակերպիչ**	**Էլեկտրոնային փոստի հասցե**	**Հեռախոս**
Դիզնի տարրական դպրոց	Քելլի ՄքՆատ	kellymcnutt@burbankusd.org	729-0100
Էդիսոն տարրական դպրոց	Ջենիֆեր Ֆլորես	jenniferflores@burbankusd.org	729-0150
Էմերսոն տարրական դպրոց	Մարգարիտա Թաբս	margaritatubbs@burbankusd.org	729-1200
Բրետ Հարթ տարրական դպրոց	Բրիանա Վոկեր	briahnawalker@burbankusd.org	729-1250
Ջեֆֆերսոն տարրական դպրոց	Ջենիֆեր Գրիֆից	jennifergriffith@burbankusd.org	729-1600
ՄքՔինլի տարրական դպրոց	Դանիելլ Քաստեր	daniellekuester@burbankusd.org	729-2000
Միլլեր տարրական դպրոց	Անջելա Չանգ	angelachang@burbankusd.org	729-2050
Պրովիդենսիա տարրական դպրոց	Թալար Թոփալյան	talartopalian@burbankusd.org	729-3100
Ռուզվելտ տարրական դպրոց	Թերրի Ուիլիամսոն	terrywilliamson@burbankusd.org	729-3150
Ստիվենսոն տարրական դպրոց	Իվետ Ջալյան	yvettejalian@burbankusd.org	729-5700
Վաշինգտոն տարրական դպրոց	Դեբբի Ֆարմեր	debbiefarmer@burbankusd.org	729-5750
Լյութեր Բրբենք միջանկյալ դպրոց	Ջիլ Թոբին	jilltobin@burbankusd.org	729-3700
Դոլորես Հուերտա միջանկյալ դպրոց	Անի Թաշյան	anitashchian@burbankusd.org	729-3900
Ջոն Մյուիր միջանկյալ դպրոց	Վենդի Վարգաս	wendyvargas@burbankusd.org	729-3800
Համայնքային ցերեկային դպրոց	Ֆրենկ Ֆուենտես	frankfuentes@burbankusd.org	729-7600
Մոնտերեյ միջնակարգ դպրոց	Էդվին Թեյլոր	edwintaylor@burbankusd.org	729-5900

Մագնոլիա Փարկ միջնակարգ դպրոց	Էդվին Թեյլոր	edwintaylor@burbankusd.org	558-4677
Բրբենք միջնակարգ դպրոց	Նարինե Բարզեգար	narinehbarzegar@burbankusd.org	729-5100
Ջոն Բրոզ միջնակարգ դպրոց	Վիկտորիա Քուսեո	victoriacuseo@burbankusd.org	729-6900
Անկախ ուսուցման ակադեմիա (ILA)	Լոռա Անդերսոն	lauraanderson@burbankusd.org	729-8700

Դուք ձեր երեխայի կրթության կարևոր մասն եք կազմում: Համոզվելու համար, որ ձեր երեխան իրեն հանգիստ է զգում քննությունները հանձնելու ընթացքում, դուք կարող եք.

- Բացատրել երեխային, որ այս քննությունները կօգնեն նրան սովորել և չպետք է անհանգստանալ կամ վախենալ:
- Ձեր երեխայի հետ հանձնել փորձնական քննություն caaspp.org/practice-and-training/index.html կայքէջում, որպեսզի նա ծանոթանա քննական հարթակի և կարգավորումների հետ:
- Հիշեցնել նրան, որ դուք և նրա ուսուցիչը ցանկանում եք, որ նա ջանասիրաբար փորձի և պատրաստ եք օգնելու ամեն քայլափոխի:

Ձեր երեխայի քննությունների արդյունքները դուք կստանաք նոր ուսումնական տարվա սկզբին: Արդյունքները ցույց կտան, թե որ ոլորտներում է ձեր երեխան առաջադիմել և որ ոլորտներում է նրան օգնություն հարկավոր, որպեսզի դուք կարողանաք օգնել նրան տանը, իսկ ուսուցիչը՝ դպրոցում: Այս քննությունների վերաբերյալ հավելյալ տեղեկություն ստանալու համար, հյուրընկալել Starting Smarter կայքէջը. ca.startingsmarter.org/, կամ վերանայել ծնողների ուղեցույցը հետևյալ կայքում. cde.ca.gov/ta/tg/ca/parentguidetounderstand.asp.
Հարցեր ունենալու դեպքում, խնդրում ենք դիմել կրթական տեխնոլոգիայի կազմակերպիչ Ռոբին Անդերսին robynanders@burbankusd.org հասցեով:

Անկեղծորեն,

Դոկտոր Լինդա Յանգ
Ուսուցողական ծառայությունների գծով գերատեսչի տեղակալ
Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան

Բրբենքի Միացյալ Դպրոցական Շրջանը հետևում է, որ կրթության մեջ հավասարություն լինի բոլոր անհատների համար: Շրջանի ծրագրերն ու միջոցառումները զերծ պիտի լինեն անօրինական խտրականությունից , ներառյալ խտրականություն ընդդեմ անհատի կամ խմբի, հիմնվելով ռասսայի, մաշկի գույնի, ծագման, ազգության, ազգային ծագման, ներգաղթի կարգավիճակի, էթնիկ խմբի պատկանելիության, տարիքի, կրոնի, ամուսնական կարգավիճակի, հղիության, ծնողական կարգավիճակի, ֆիզիկական կամ հոգեկան անկարողության, սեռի, սեռային կողմնորոշման, գենդերի, գենդերի ինքնության, սեռային արտահայտության կամ գենդերային տեղեկության վրա կամ նման նկարագրային հատկանիշներ ունեցող մարդկանց կամ խմբերի մեկ կամ մի քանի հատկանիշներ ունեցողների դեմ խտրականություն գործադրելուց: